

եւ ժառանգաբար պահպանեց գրեթէ դար մ'ամբողջ:

Այսպէսով կայ Ս. Գրիգորի Աջ մը Էջմիածին, որ 1439—41ին փախցուած կ'ըսուի, Սսէն, ուրիշ մը Սոյ կաթողիկոսներն ունէին եւ միշտ կը յիշատակեն առանց հակառակութեան, եւ 1584ին Սոյ խաչատուր կաթողիկոսին Աթոռակալն ու յաջորդն գիտնական Ազարիա Զուղայեցին ցոյց տուաւ ի Սիս՝ Գրիգոր ԺԳ. Հռոմայ Քահանայապետին նուիրակ Լէօնարտօ Եպիսկոպոսին, ինչպէս մանրամասն պիտի տեսնենք սոյն Ազարիա Զուղայեցւոյ կենսագրութեան մէջ, եւ երրորդ մը՝ Աջպահանց ձեռքն անկորուստ պահուած 1294էն ցայսօր, ինչպէս կ'ըսուի: Այնպէս որ Էջմիածնի «Արարատ» լրագրին մէջ (1896) Կ. Կոստանեան ստիպուած էր գրելու. «Հայոց մէջ եղել է մի ժամանակ, եւ այն Ժէ դարում եւ յետոյ, երբ վարդապետներն ուղեցել են հասկանալ, թէ Ս. Էջմիածնում գտնուող աջը Ս. Լուսաւորչի ո՞ր ձեռքն է՝ ա՞յ թէ ձախ, կամ թէ ո՞րն է իսկականը՝ Սսի՞ աջը թէ Էջմիածնի» (արտատպեալ էջ 40):

Արդ, մեր Յակովբոս-Մեսրոպ վարդապետն իւր ընկերին հետ կ'երթայ Հաճին՝ Յովհաննէս-Տէր Ադամ կաթողիկոսին եւ կ'ուզեն եպս. ձեռնադրուիլ: Հաղիւ քանի մ'ամիս մնացած պիտի ըլլան այնտեղ, եւ արդէն յաջողած են կաթողիկոսը վաստըղիլ: Կաթողիկոսը՝ 1742ին Օգոստ. 15ին «կամօք եւ յօժարութեամբ եւ ընտրու-